

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Օտարաբաղադրացիք զիմում են ուղղակի
Կոնստ. Պետրուս. „Մուսկո“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դպրի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչէր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Համայնքների կոնսուլները:—Ներքին տեսչի-
թիւն: Հայոց թատրոնը: Ներքին լուրեր:—Ար-
տաքին տեսչի թիւն: Նամակ Հնդկաստանից:
—Վաշիկի: Ներգաղթից:—Գայտարարութիւններ:
—Տեղեկացոյց:—Բանաւոր տեղական: Բակի աղա-
ղաղ: Կոնսուլները: Կոնսուլները: Կոնսուլները:

ՀԱՍՏՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՈՒ- ԹԻՒՆԸ

Ամեն մի հայ, որ հեռու է ապ-
րում հայութեան գլխաւոր կեն-
տրոններից, վաղուց օտարացել է,
ծանօթ չէ հայոց հասարակու-
թեան ժամանակակից կեանքի
հետ,—իրան իրաւունք է համա-
րում խորհրդներ տալ նոյն իսկ
հայ ազգաբնակչութեան մէջ ապ-
րող հասարակական գործողներին,
արհամարհանքով վերաբերվել դե-
պի նրանց գործունէութիւնը...

Լըռակայեցեք ձեզ մի հայ
որ ամբողջ կեանքը անցնում է օ-
րինակ Մոսկվայում, կամ Ս. Պե-
տրբուրգում, հեռու հայոց ազ-
գաբնակչութեան կենդանի շրջա-
նից, վաղուց չէ լսել ինչպէս հայ
մարդը խօսում է, չէ տեսել ինչ-
պէս հայը ապրում է, ինչ առա-
ջադիմութիւն է անում հայոց մը-
տաւոր կեանքը,—և նա յանդգ-
նում է մշտեղ կամ մինչև ան-

գամ ստեղծել հայոց գրական
լեզուն:

Լեզուն ստեղծել չէ կարելի,
նրան կարելի է, այո՛, մշակել բայց
զորա համար հարկաւոր է ձեռքի
տակ ունենալ առարկան, հում
նիւթը, այսինքն ժողովրդի կեն-
դանի բարբառը, հարկաւոր է ապ-
րել այն ժողովրդի մէջ որ ամեն
օր խօսում է իր մայրենի լեզուով
ինչպէս բնագետի գիտնական թե-
օրիական հետազոտութիւնների
համար հարկաւոր է ձեռքի տակ
ունենալ հետազոտութեան առար-
կան, բնական արդիւնքը:

Դուք ապրում էք հայերի մէջ,
լսում էք ամեն օր ինչպէս հայը
գործ է ածում իր մայրենի լեզուն
իր հասարակական և ընտանեկան
կեանքի մէջ, լսում էք ինչպէս նա
հին, մեռած ձևերի և ոճերի փո-
խանակ հետզհետեւ սկսում է գոր-
ծածել նոր, աւելի հասարակ, ա-
ւելի հասկանալի, աւելի կենդանի
ոճեր և ձևեր, լսում էք, օրի-
նակ, ինչպէս նա փոխանակ «բա-
ր» գործ է ածում «իմ կարծի-
քով», փոխանակ վերայ, նորա,
իւր, ամեն օր գործ է ածում
վրա, նրա, իր բառերը,—բայց
օտարացած, հայութենից անջատ-
ված հայը, անտես առնելով որ

դուք հայ ժամանակակից կեանքի
հետ աւելի ծանօթ եք, քան թե
ինքն, յանդգնում է ձեզ խորհուրդ-
ներ տալ, ձեզ յանդիմանել, թե
դուք հեռանում էք գրաբարից
և փչացնում էք հայոց լեզուն:

«Չե՛ր նպատակն է գրաբարից
հեռանալ, իսկ իմ նպատակն է
աշխատել մօտենալ գրաբարին»
գրում էր մեզ նորերումն օտա-
րութեան մէջ ապրող հայերից
մէկը:

Կարծես թե կարելի է արուես-
տական կերպով ստեղծել լեզուն:

Եթե մենք չը գրէինք ժողովր-
դական, կենդանի բարբառով եր-
բէք մեր թերթը այն աշողու-
թիւնը չէր ունենայ, ինչ որ ունէր
նա եօթ տարվայ ընթացքում
նոր սերունդի շրջանում:

«Նա միշտ կը գործածեմ նորա,
վերա և ոչ թե նրա, վրա և
այլն» գրում է մեզ մեր ծանօթը:

Կարծես թե կարելի է բռնի
կերպով գործ ածել հին, կլասի-
կային լեզուի այս կամ այն ձևը,
երբ նոր լեզուի մէջ կան արդէն
կենդանի նոր ձևեր: Ինչքան կա-
մենում էք գործ ածեցէք հին
ձևերը և ոճերը, բայց ժամանա-
կակից հոսանքը ձեզ կը յաղթե-
ւ կը ստիպէ գործ ածել գրա-

կան լեզուի մէջ ժողովրդական ո-
ճերը և ձևերը:

Այսպէս է կազմվում ամեն
տեղ, ամեն ազգի մէջ գրական
ժամանակակից լեզուն, մաքրելով,
այո՛, ռամկական բարբառները,
բայց մի և նոյն ժամանակ օգտ-
վելով նրանց կենդանի ձևերից և
ոճերից...

Թող համոզները յամառեն ի-
րանց երազական ցնորքների մէջ
կենդանացնել դիակը, այսինքն ստի-
պել հային խօսել մեռած լեզուով
—իսկ մենք կարծում ենք որ կեն-
դանի գաղափարների, ժամանա-
կակից կեանքի համար հարկաւոր
է կենդանի խօսք:

Իսկ կենդանի խօսքը մենք կա-
րող ենք գտնել միմիայն ժողովրդի
ժամանակակից կեանքի մէջ:

Ինչ կասէիք, ընթերցող, եթե
մի բժիշկ հիւանդից մի քանի հա-
զար վերստ հեռու գտնվելով, յան-
դգնէր հրահանգներ տալ հիւան-
դին, առանց երբէք նրա կազ-
մուածքը ուսումնասիրած լինելով
առանց նրա կեանքի հետ ծանօթ
լինելով: Դո՛ւք անում են մեր
կողմ համոզները. նրանք ապրելով
հայութենից հազար վերստ հեռու
յանդգնում են մեզ, հայ ժողովր-
դի մէջ ապրող գործողներին հը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿԻ Ա.ԲԱՂԱՂ

(Երկրորդ մասը)

9.

Պետրոս Մարտիանի յանկարծանա մահը խիստ
ցաւալի ներդրումովն ունեցաւ նրա ամբարտ
ընտանիքի վրա: Տիկին Մարիամը չուարված, խելքը
կորցրած, չը գիտէր, թէ ինչ պէտք էր անել:
Ընտանիքը ոչ մի օրինակոր բարեկամ չուներ:
Հանգուցեալի մերժող, լացաւոր և ետական ընա-
ւորութիւնը. նրան այն անտիճան առանձնացրել
էր, որ մեռելուց յետոյ մի մարդ չը գտնվեցաւ,
որ նրա անկողն, անտեղեկ ժառանգներին բարի
խորհուրդներ տար անտէր մնացած կայքի մասին:
Ինքը, տիկին Մարիամը, թէ ինչ խելքի և հասկա-
ցող կլինէր, բայց տղամարդի խտուրթիւնը նրան
այն վիճակի մէջ էր դրել, որ ամբողջ իր ամուս-
նական կեանքում, ամեն շոր պատերից դուրս,
չը գիտէր, թէ իր տղամարդը ինչով է զբաղված,
կամ նրա գործերը ինչ դրութեան մէջ են: Եւ այս
պատճառով, երբ վարձակալեցաւ նա, որ տունը ընտ-
րաւ ինքն էր, որ ամեն ինչ կենդանացրել էր իր
և իւր ընտանիքի մի օրինակ տէր չէր ձա-

նաչում, որի կինը, որդին, զաւակներն անգամ իր
համար օտարներ էին,—երբ վարձակալեցաւ այդ
բնակարանը, այնուհետև սկսեցին տիրել
այն մարդիկը, որոնք հանգուցեալի ձեռքի յաճո-
ղակ գործիչներն էին, որոնք կրթված, վարժված
և կատարելագործված էին նրա զատարարութե-
ան համեմատ,—գործիչներ և խաբարիւթեան
մէջ...

Մարտիանի տան միակ բարեկամը մնացել էր
Սիմոն Եղգորիւնը, աղայի մահից յետոյ առաջադրե-
լացվեցաւ այդ պոլիտիկական հին աւագակի առջև.
Նա, որ առաջ աղայի փաստաբանն էր և վարում
էր նրա դատաւարական գործերը, այժմ դարձել
էր տիկին Մարիամի գլխաւոր խորհրդատունը:

Մի զիշեր տիկին Մարիամը և իր երկու աղ-
ջիկները՝ Գայանէն և Հռիփսիմէն, բոլորն էլ սե-
հագած, հաւաքվել էին իրանց սենեակում: Սիմոն
Եղգորիւնը նստած էր ճաղի մօտ, և ահագին ակ-
նոցները հաղորած ահագին քիթ վրա, ձեռքերը
բռնած ունէր մի կտոր թուղթ, որը երբեմն մօ-
տեցնում էր աչքերին, երբեմն հեռացնում էր,
և երբեմն ծնկի վրա գնկելով թուղթը, խորին
մտածութեան մէջ էր ընկնում: Նա նստած էր
մի հնագետի, որ նստած լուռ, կիսամաշ արձա-
նագործեան առջև, աշխատում է կարգաւ ան-
վերձանել ինքզինքնէն: Դա մի հեռագիր էր:
Տիկին Մարիամը և նրա աղջիկները անհամբ-
րութեամբ սպասում էին Սիմոն Եղգորիւնի բա-
ցատրութեանը, որովհետև այդ հեռագիրն էր
կախված նրանց թէ ուրախութիւնը և թէ տրտ-
մութիւնը:

Հեռագրի բովանդակութիւնը խիստ պարզ էր
և բաղկանում էր մի քանի տողերից միայն. «Իմ

դպր անկարելի է, ես ճանապարհ դրեցի Միքա-
յէլին, նա կը կարգադրէ բոլոր գործերը, որպէս
հարկն է: Ստորագրված էր՝ Ստեփան Մար-
տիան:

Հեռագրի ոտնը, կարծ և լակոնական բովան-
դակութիւնը անբաւականացուցիչ էր տիկին Մա-
րիամին. մօր հետաքրքրութիւնը չէր կարող դո՛ւս-
նալ այս մի քանի անսիրտ խօսքերով. փմ դպր
անկարելի է, հաղորդում էր որդին. ինչո՞ւ համար
անկարելի է, ինչ էր պատահել,—ահա այս հար-
ցերը սկսեցին տանջել մօրը: Մայրը մի օրին
պատճառի մասին մտածել չէր կարող, բացի
նրանից, թէ որդին հիւանդ պէտք է լինէր, որ չէր
կարողացել կատարել նրա խնդիրը:

—Ախ, ինչ կը լինի պատահած, ասում էր նա
ցաւալի ձայնով:—Ստեփանը բարի էր, շատ բարի,
նա ինձ մնալի չէր թողնէ. ան, Տէր Աստուած,
ինչ կը լինի պատահած...

Սիմոն Եղգորիւնը հանգստացնում էր նրան.

—Օրհնած, հաւաքվի մի բան կը լինի պատա-
հած, որ չի կարողացել դալ:

Գայանէն և Հռիփսիմէն թէն նոյնպէս տխու-
րեցին իրանց եղբոր մասին, բայց սրտով ուրախ
էին, որ միւսանգամ կը տեսնեն Միքայէլին: Մի
քանի տարվայ ընթացքում նրա մասին լսել էին
այնքան շատ բաներ, որ Միքայէլը դարձել էր
նրանց համար մի տեսակ առաքելական արա-
րած:

Բայց Սիմոն Եղգորիւնի վրդովմունքներն չափ չը
կար. նա յոյս ունէր, եթէ Ստեփանը դալ չը կա-
րողանայ, անպատճառ իրան կը նշանակէ գլխա-
ւոր հաւատարմատար: Այժմ նրա ծրագիրը փոխ-
վեցաւ: Նա աւելի շահաւէտ էր համարում գործ

ունենալ անփորձ և անփութ Ստեփանի հետ, քան
թէ հեռու Միքայէլի հետ, որի աստատանքութիւն-
ները վաղուց յայտնի էին նրան: Այդ հին գաղ-
մաբանը դարձ ունէր մի մեծ ճարակ տառապ
հանգուցեալ աղայի կայքից, որից ամեն մարդ
իր կողմն էր քաշում:

Նա մտքով դարձաւ դէպի հանգուցեալի յիշա-
տակը և այսպէս դուրս թափեց իր տհաճութիւ-
նը Միքայէլի մասին:
—Հոգիդ թող լցուի մէջ լինի, Պետրոս աղայ,
ձայն արձակեց նա երեսը խաչակրեցով:—Դու
էիր իմանում, թէ Սիմոն Եղգորիւնը ինչ մարդ է...
ամեն բանի մէջ նրա հետ մասկաւաթ էիր անում,
վերջիւնները տալիս էիր և ասում. Սիմոն Եղգո-
րիւն, ինչպէս ինչքը կը կտրէ, էնպէս արաւ. տա-
նում էիր, մի քանի օրվայ մէջ փողերը սաղաց-
նում էիր. բայց հիմայ իմ երեսին էլ չեն ուղղում
մտիկ տալ... Աստուած միայն գիտէ, թէ ինչքան
եմ չարաբանի ես այս տան շահերի համար...

—Սիմոն Եղգորիւն, դու էլի մերն ես, պատախա-
նեց նրան տիկինը, սիրտ աղովով:—Դու էլի կը
մնաս քո գործին և ամեն բան. քո խորհրդովը կը
կատարվի:

Երբեմն փաստաբանը ընդունեց խիստ միամիտ
կերպարանք և կարեկցութեամբ յայտնեց.

—Աստուած է վկայ, որ իմ սիրտը ցաւում է.
ես իմ օրը անց եմ կացել, այսօր կամ, էլ դուք
կարելի է մեռնեմ. հիմայ փողն ու հողը ինձ հա-
մար դիմ մէջ են. աշխարհիցս ինչ եմ տանդու.
մի պատանք ինձ համար բաւական է... Բայց իմ
սիրտը, տես, դրանց համար է ցաւում (նա ցոյց
տուեց Գայանէնի և Հռիփսիմէնի վրա) դրանց հա-
մար եմ աշխատում: Ստեփանը, մեզ որ լինի

րահանգներ տալ թէ ինչպէս պէտք է մշակել և կազմակերպելը հայոց նոր գրական լեզուն։

Մենք նրանց կը պատասխանենք՝ այդ ձեր գործը չէ՝ իսկ եթէ կամենում էք այդ ինքրի մէջ ձայն ունենալ եկէք ապրեցէք այստեղ հայ ազգաբնակչութեան շրջանում, եթէ ոչ դուք իրաւունք չունէք որ և է կարծիք յայտնել մի ինքրի վերաբերութեամբ, որի հետ ծանօթ չէք և չէք կարող ծանօթ լինել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Սեպտեմբերի 3-ին Ամսթամբի թատրոնում կայացաւ հայ դերասանական մշտական խումբի առաջին ներկայացումը։ Հայ հասարակութիւնը լցրել էր թատրոնական դահլիճը, որ այդ գիշեր շքեղ կերպով լուսաւորված էր։ Խաղում էին «Սէր առանց համարման» դրամա 5 արարածով, իտալերենից թարգմանված։ Ներկայացմանը մասնակցում էին, և Պօլսից հրաւիրված արտիստներ օր. օր. Սաւադիկ, Սիրանուշ, պ. Ալաման և թիֆլիսցի արտիստներ՝ օր. օր. Վարդուհի, Մելքեան, պ. պ. Չմէլեան, Սուքիասեան, Մանգրեան, Սաքրազեան, Ալպեան, Մելքե-Ալամանց։ Ասացինք, որ թատրոնը շքեղ կերպով լուսաւորված էր, հայ հասարակութեան ամեն դասակարգի ներկայացուցիչները լցրել էին դահլիճը։ Նոյն իսկ թատրոնի օդը ոգևորութեամբ էր լցվել։ Կարգացիցան «Թէ իմ աշուտ», «Հիմա էլ լուենք», հայ բեմի վրա դերասանուհիներ և դերասաններ մի բազմութիւն դուրս եկաւ, ամենքը աչքի առաջ ունէին, որ հայ-դերասանական տաղանդը խումբը մի կազմակերպութիւն է ստանում, որ հայոց բեմի վրա դուրս են գալիս որոշ ամապուր աւանդող դերասանուհիներ և դերասաններ։

Այդպէս է, իր գլուխը կը պահէ, բայց դրանք աղբիւրներ են...

Տիկին Մարիամը զարմացած լսում էր ծերունի խաբարաւոր խօսքերը, նա հասկանալ չէր կարողանում, թէ ինչ էր նրա միտքը։

— Հիմա, եթէ հանգուցեալ աղան վերադառնայ աչքերը բաց անէր և տեսնէր այս բոլորը, խեղճ մարդու սիրտը կը տրաքէր բարկութիւնից։ Այն, Աստուած, ովքեր են կանգնած նրա գործերի վրա, — մի ծծկեր աղայ, որը սեր ապրտակից ջուկէ չէ իմանում... (Նա անխաղձութեամբ էր Մելքայէլին)։ Ես Սիմոն Եագորիչն եմ, ողջ քաղաքը ինձ ճանաչում է։ 22 տարի պոլիցիայում գրադրութիւն եմ արել, 15 տարի թ... մովսիսի մօտ եմ եղել, մարդիկ սպիտակել են սուղերումը ման գալով, ամեն գալ օրն են զայր մերի՝ նման իմանում եմ, բայց ինձ էլ բանի տեղ չեն դնում...

Սիմոն Եագորիչը, ինչպէս ամեն խորամանկ մարդիկ, սովորութիւն ունէր միշտ իր գետնի վրա լինելու, անխաղձութեամբ պահել, պարզ չը խօսել։ Բայց տիկին Մարիամը նկատում էր, որ նա մի բան ասել էր ուզում, միայն կամ չէր վստահանում, կամ թողնում էր, որ տիկինը ինքը հասկանայ և առաջարկէ նրան։

— Ինչ էք կամենում, Սիմոն Եագորիչ, հարցրեց նա համբերութեամբ հարմարելով։

Ներքոնք, մի բուռն ծխախոտի փուխ վեր քաշելով իր քթի անջատակերից, ոգևորվեցաւ, սիրտ առեց, և մի քանի անգամ հաղաղով, կրկին վեր առեց հեռապիքը, և նորից սկսեց բացատրել նրա խմբատը։

— Գիտե՞ք ինչ կայ, տիկին, այս հեռապիքով Ստեփանը խմբում է տալիս ձեզ, որ իր փոխա-

նէր, պէտք էր ողջունել զործի սկզբնաւորումը թիւնը և հասարակութիւնը չը ինչպէս իր առատ ծափահարութիւնները։

«Սէր առանց համարման» պիեսան այն տեսակներից է, որոնք աղքատ են լինում թէ բովանդակութեամբ և թէ գեղարուեստական արժանաւորութեամբ։ Ամենալաւ դերասանը այդպիսի պիեսայում հաղել թէ կարողանայ ցոյց տալ իր ընդունակութիւնը, որովհետեւ բոլոր դերերը և զործող անձնիքների դրութիւնները կատարելապէս անբնական, արհեստական, և միանման են։ Միակ փոքր ի շատ օրինաւոր դերերը այդ պ. պ. Չմէլեանի և Մանգրեանի դերերն էին, որոնց աշուղ վեցաւ կենդանի և բնական խաղ ցոյց տալ հասարակութեանը։

Ահա պիեսայի բովանդակութիւնը. կոմս Երկօլէ-Մոնտեսիլա պատկեր է մի հարստացած հասարակ մարդու աղջկայ վրա։ Կոմսի սէրը դէպի իր կինը երկար չէ տևում, նա շուտով ընկնում է մարկիզուհի Անիէզիէի ետեկից և այդ այրիի համար պատրաստ է ամեն բան գոհել։ Մարկիզուհին ընդունում է կոմսի զոհաբերութիւնները, մինչև անգամ զրգում է նրան զոհաբերութիւններ անել։ Նա կօկօտ չէ, բայց բարձր շրջանին պատկանող մի այրի կին է, որի համար սիրահար ունենալը, մինչև անգամ մարդուն իր կնոջից բաժանելը և նրա հետ ամուսնանալը յանցանք չէ համարվում։

Կոմսը բոլոր զոհաբերութիւններ անում է մարկիզուհու համար. նա ուշադրութիւն չէ դարձնում կնոջ վրա, ստիպում է նրան իր կամքի հակառակ ծանաղաբարձորել հօր հետ, փերձապէս նրա դեղի բաժակի մէջ թոյն է ածում։ Կոմսի այս արարքը կոմսուհին պատահմամբ տեսնում է։ Այն րոպէին երբ կոմս օր խղճը տանջում է իրան, երբ նա տատանում է, յայտնել իր արարքը և բժիշկ հրաւիրել թէ ոչ, այդ րոպէին կինը կամենում նրա հետ տեսնուի։ Այդ տեսութեան ժամանակ կոմսուհին կարճաժամ պատմում է նախկին չորս զործողութիւնների բովանդակութիւնը, կամենում է ընդունել բաժակի թուխաւորված դեղը, բայց ամուսինը նրան չէ թողնում և մի հրաշքով երկուսը հաշտվում են միմեանց հետ։ Այդ ժամանակ մարկիզուհին մոտնում է կոմսի տուն, և ամուսիններին հաշտված տեսնելով իրան վատ է ըզգում։ Նրան տալիս են թուխաւորված բաժակը, որը կոմսուհին առնում է տուփի

ձեռքից և իր թէ պատահմամբ գցում է գետին։ Մարկիզուհին հրաշքով հասկանում է, որ իր բաժակի լի մօնադրան թուխաւորված էր, որ կենցեղով կոմսուհին է պարտական և երկու հակառակորդուհիները մշտական բաժանմունքներ են դառնում, իսկ շարունակութեան մէջ երեւի ամենքը երջանիկ կապեն։

Մենք աշխատեցինք պիեսայի բովանդակութիւնը պատմել կարճաժամ, միայն զխաւորվելու, որոնք զործի հետ յարաբերութիւն ունեն, էլ չենք խօսում պիեսայի բազմաթիւ անմիտ և անկապ ծիւղերի մասին։

Ինչպէս ընթերցողը տեսնում է ինտրիգան բաւական խրճիթված է, այնքան որ բոլորովին չէ համապատասխանում պիեսայի բովանդակութեանը և արժանաւորութեանը։

Ահա այդ էր պատճառը, որ բոլոր դերերը և պիեսայի դրութիւնները բոլորովին անբնական և միանման էին։ Խաղի մասին այս անգամ մենք ոչինչ չենք ասի։ Մենք չենք կամենայ այդ ներկայացման խաղի տպաւորութեան տակ մասնակցողների մասին մեր կարծիքը յայտնել։ Մենք կը սպասենք միւս ներկայացումներին, մասնաւոր որ այդ տեսակ պիեսայի մէջ անկարելի է գնահատել դեբիւտանտների արժանաւորութիւնները...

Պէտք է մի քանի խօսք ասել լեզուի մասին։ Այն կարծիքը, որ մենք վաղուց յայտնել էինք, այժմ արդարանում է։ Ամբողջ պիեսայի լեզուն մի խառնուրդ էր և. Պօլսի բարբառի և Կովկասեան գրական լեզուի։ Բոլոր խաղացողները ոչ ճիշդ և. Պօլսի բարբառով էին խօսում և ոչ Կովկասեան գրական լեզուով։ Պօլսեցի արտիստները բառերի միայն մի քանի վերջաւորութիւններն էին փոխել, իսկ տեսակները կենթարկվելով պոլսեցիներին, անդադար նրանց դարձաւածներն էին զործածում։ Հասարակութիւնի շատերը զրեթէ ոչինչ չէին հասկանում։ Սեր կարծիքով աւելի լաւ կը լինի, որ բոլորը և. Պօլսի մաքուր բարբառով խօսէին։ Առ այժմ այսքանով կը բաւականանանք, միւս ներկայացումներից յետոյ կաշխատենք մի թեթիւ տեղեկութիւն տալ խաղի և դերասանների ընդունակութիւնների մասին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԱՐԱՏՈՎՈՅ մեզ գրում են։ «Պատասխան 29-ին Սարատովի ամսագրին բանակի եկեղեցում 40-որդ գիվիլիան հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց զենկալ Լազարեվի յիշատակին։ Հանդիսին ներկայ էին բոլոր բարձր և ստորին աստիճանաւորները։ Հոգեհանգիստից յետոյ զենկալ Շատիրով դարձաւ դէպի զօրքը և իր ճառի մէջ զովեւոր հանգուցեալի անձնութիւնը իր տէրութեանը, նրա հաստատաւորութիւնը իր նշանակութեան մէջ, ցոյց տալով նրան իբրեւ հմուտ պատերազմական և հասարակական օգտակար մարդ, աւելացրեց որ սխալ չի լինի ասել, որ զենկալ Լազարեվին կարող է որպէս օրինակ ունենալ իւրաքանչիւր զինուորական ծառայող։»

ԹԻՖԼԻՍԻ Կաթնղիկէ եկեղեցւոյ ծխական ուսումնարանի հոգաբարձութիւնը յայտնում է հասարակութեանը, որ նորեկ աշակերտների ընդունելութիւնը լինելու է սեպտեմբերի 3-ից մինչև 20-ը և որ այդ ժամանակից յետոյ չի ընդունվի ոչ մի աշակերտ։

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՑ, որ օրերումս այնտեղի երիտասարդները մտադիր են մի հայերէն ներկայացումն տալ։

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Լազարեվի մահը շատ տխուր տպաւորութիւն գործեց Մոսկւայի հայ հասարակութեան վրա։ Խաղիչներում հրատարակված է, թէ 2-ին սեպտեմբերի հոգեհանգիստ է կատարվելու հանգուցեալ յիշատակին այստեղի հայոց եկեղեցւում. Բոլոր լրագիրները շատ ցաւելով են խօսում հանգուցեալ մասին։ Օրինակի համար «Московский Вѣдомости» 218 համարում մի գեղեցիկ յօդուած կայ Լազարեվի յիշատակին նուիրած յայտնի կովկասագէտ Չխսերմանի կողմից։»

Մեզ հաղորդում են հետեանք. «Սեպտեմբերի 16-ին ՄՕՍԿՎԱՅԻՑ հայոց եկեղեցւոյ Սուրբ Խաչ անուամբ — կատարելու է իր հարկարանայ յօրեհանգիստը։ Այստեղ են, որ այս տաղանդութիւնը աւելի փառաւոր անելու համար — տեղիս աւագ քահանայ Սուրենիանցը մի մեծ աշխատութիւն է պատրաստել, որ պիտի բաղկանայ 10—15 տպագրական թերթերից և մի քանի մեծադիր լուսանկար պատկերներից, բովանդակութիւնը դեռ ևս մեզ յայտնի չէ. ասում են, որ արժանապատիւ քահանայ ի իրաւ այլ հետաքրքրաշարժ տեղեկութիւնների Ռուսաստան վերաբնակած հայ դաղթականների մասին — իր աշխատութեան մէջ ներկայացնում է Մոսկւայի երեք հայոց եկեղեցւոյն 100 տարվայ հալււթ — մի գործ, որ մինչև այսօր դեռ չենք տեսած հոգեւորականներից։ Գիւրքը իբրեւ թէ նուիրած են

— Եթէ պօլիցիան ուշադրութիւն կը դարձնէ, այն ժամանակ մենք կորած ենք...

— Մեզ կարող են մասնակ և...

— Աւելի լաւ կը լինէր, որ խանութի ետեի անյայտ դուռը նորնպէս կնքէին, որպէս միւսները...

— Այժմ նա ոչինչ բանի չէ ծառայում... ամեն բան վերջացած է...

— Գուրբ գնացէք, անհոգ կացէք, պատասխանեց Սիմոն Եագորիչը իր խօսակցիներին։ — Ես ամեն բան սարքել եմ, ինչ որ պէտք է...

Խօսող խումբը իրանց սև մտածութիւնների հետ անյայտացան գիշերային մթութեան մէջ։ Գրանդ հանգուցեալ աղայի խանութի գործակատայններն էին...

Սիմոն Եագորիչի գնալուց յետոյ տիկին Մարիամը սենեակը մտան երկու կին դրացիներից, որոնք եկել էին նրան մխիթարելու համար։ Նրա բանցից մէկը պառաւ էր, իսկ միւսը մանկահասակ, որ բաւական թարմ և սիրուն դէմք ունէր։ Սովորական խօսակցութիւններից յետոյ, որ առհասարակ գործ են դնում սղաւաղներին միջի թարելու համար, հիւրերից մէկը, պառաւ, դարձաւ դէպի տ. Մարիամը այս հարցով։

— Ախար պատմիր, մէկ տեսնեմ, ինչպէս պատահեց այդ ցաւալի դէպքը։

Պառաւի հարցմունքը հանգուցեալ աղայի վախճանի մասին էր. տ. Մարիամը հարկը անգամ պատմել էր նրա հրաշալի մահուան պատմութիւնը, այժմ սովորական լցուցանել և իր նոր հիւրերի հետաքրքրութիւնը։

(Կը շարունակվի)

